Հաստատված է
«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի
2014թ. փետրվարի 14-ի N 1 արձանագրությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՊՀ-Ի
Հ Ր Ա Վ Ե Ր

«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից

- նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման.
- հայտերը ներբեռնելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվել www.armeps.am կայքում (կայքի վերևի ձախ անկյունում) տեղադրված ժամացույցով,
- հայտ կազմելիս անհրաժեշտ է ուշադրությամբ ծանոթանալ կայքի «Նորություններ» և «Հաճախ տրվող հարցեր» բաժիններում պարբերաբար տեղադրվող և թարմացվող նյութերին,
- եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է www.armeps.am կայքի «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ, վերոգրյալ մասը մանրամասն ներկայացված է www.armeps.am կայքի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում,
- Armeps համակարգի հետ հարցեր և խնդիրներ առաջանալիս դիմել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով (հեռախոս՝ 28-93-20):

«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի բոլոր մասնակիցներին և նրանց տնօրեններին

«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ի կարիքների բավարարման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության(Ա/Ձ-ի) միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված **գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր** (այսուհետ՝ ապրանք):

Ապրանքը մատակարարվելու է պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցին և տեխնիկական բնութագրին համապատասխան:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **մինչև 2014թ. փետրվարի 28-ը, ժամը 11:00, www.armeps.am** էլեկտրոնային կայքով:

Հայտը ներառում է **«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3»** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված № 1) **«Պիտանելիության չափորոշիչ»** և գնային առաջարկ (Հավելված №2)՝ **«Ֆինանսական չափորոշիչ»**, ընդ որում, գնային առաջարկը, բացի այն, որ բեռնվում է սկանավորված տարբերակով՝ նաև կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, **www.armeps.am** էլեկտրոնային կայքի միջոցով, **2014թ. փետրվարի 28-ին, ժամը 11:00-ին:**

Հայտերի բացման և գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները: Հաղթողի ընտրությունը կկատարվի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Եթե ընտրված մասնակիցը հրաժարվում է պայմանագիր կնքելուց կամ զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից, ապա պատվիրատուն պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում երկրորդ տեղն զբաղեցրած մասնակցին, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ տեղն զբաղեցրած մասնակցին: Մասնակիցը չի կարող ներկայացնել մեկից ավելի հայտ: Գնային առաջարկների հավասարության դեպքում, ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կկազմակերպվեն միաժամանակյա բանակցություններ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հավելված 5
«ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N «ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

«ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» *ծածկագրով գնման ընթացակարգին*
մասնակցելու դիմում

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**-ի **«ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3»** ծածկագրով հայտարարված ընթացակարգի ----------չափաբաժնի(երի) համարը---------- չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի(ծանուցման) պահանջների համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)---------- -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)---------- -ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

---------- մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե ----------:

---------- Մասնակցի (ղեկավարի) պաշտոնը, անունը, ազգանունը ----------

--------(ստորագրությունը)---------

Կ.Տ.

ամսաթիվը ամիսը, 2014թ.

Հավելված 5.1
«ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N «ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով **«ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3»** ծածկագրով հրավերը՝ այդ թվում պայմանագրի նախագիծը, ----------մասնակցի անունը (անվանումը)----------ն առաջարկում է հաղթող ճանաչվելու դեպքում պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝

Չափաբաժնի №	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Առաջարկվող մեկ միավորի գինը (ՀՀ դրամ)		Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը	
				Արժեք*	ԱԱՀ**	թվերով	տառերով
1	2	3		5	6	7=5+6	
1							
2							
…..							

Ծանոթություն.

* «Արժեք» սյունակը ներառում է ինքնարժեքը և շահույթը:

** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 6-րդ սյունակում,

---------- Մասնակցի (ղեկավարի) պաշտոնը, անունը, ազգանունը ----------

--------(ստորագրությունը)---------

Կ.Տ.

ամսաթիվը ամիսը, 2014թ.

Հավելված 8
«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՆԱԽԱԳԻԾ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ № «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3»

ք. Երևան **.2014թ.**

«----» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն -----ի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. *Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ի կողմից կազմակերպած «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և նշված ընթացակարգի շրջանակներում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ի կողմից կազմակերպած «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում կնքվելիք ***գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի*** գնման № «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ին վճարում է տուժանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 10%-ի չափով:

1.2 Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող ցանկացած բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. *Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև վերը նշված պայմանագրի կատարման վերջնաժամկետը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

Հավելված 10
«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № *«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3»*

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավարի՝ Դ. Գասպարյանի, որը գործում է Խորհրդի նախագահ Ռ. Ջաղինյանի կողմից 21.01.2014թ. արձակված N 07 հրամանի հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և ---------- -ն, ի դեմս ընկերության տնօրեն ----------, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի գրենական պիտույքների և գրասենակային նյութեր (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումը կատարվում է համաձայն գնման ժամանակացույցի (Հավելված 2):

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է պայմանագրում նշված ձևով, ծավալներով ու ժամկետներում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված ստանդարտին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել

է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.
3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը (Համաձայնագիրը).
3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները,
3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.
3.2 Գնորդը պարտավոր է՝
3.2.1 Կատարել սույն պայմանագրին և Համաձայնագրերին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.
3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:
3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:
3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:
3.3 Վաճառողն իրավունք ունի՝
3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.
3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:
3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.
3.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայամագիրը:
3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:
3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:
3.4 Վաճառողը պարտավոր է՝
3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:
3.4.2 Սույն պայմանագրի 1.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:
3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:
3.4.5 Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:
3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
3.4.10 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:
3.4.11 Ապրանքի մատակարարումը կտրոնային եղանակով իրականացնելու դեպքում կտրոնների գործողության (վավերականության) ժամկետ սահմանել կտրոնները տրամադրելու պահից առնվազն մեկ տարի:
3.4.12 Սույն պայմանագրի 3.4.11 կետում նշված ժամկետում կտրոնները չիրացվելու դեպքում ողջմիտ ժամկետով երկարաձգել կտրոնների գործողության ժամկետը կամ հետ ընդունել կտրոնները և կատարել վերահաշվարկ:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածում: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (սույն պայմանագրի 3-րդ Հավելված), բայց ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 25-ը, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է սույն պայմանագրում նշված ծավալներով և ժամկետներում:
61.1 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը, կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Համաձայնագրերով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վաճառողի նկատմամբ յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝պայմանագրի չկատարված մասի գնի 0,05%-ի չափով:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին (հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ: Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա) Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա Գնորդի գործողության կամ անգործության հետևանք չէ:

9.5 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Գնորդը պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.7 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները՝ հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց

կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011430163 հվհհ 01539597 Էլ. փոստ syune@cptvrc.am Աշխատակազմի ղեկավար՝ Դ. Գասպարյան _____	

Հավելված № 1
_____ 2014 թ. Կնքված
«ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով պայմանագրի ***նախագծի***

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Թուղթ գրելու, տպագրելու համար	Թուղթ A4 (210x297) մմ ձևաչափի, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, 1 մ2 թղթի զանգվածը 80 գ, փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը՝ 2,5 կգ, չափման միավորը՝ կգ
2	Թղթապանակ(ֆայլ)	Թափանցիկ պոլիմերային թաղանթից, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու համար, տուփի մեջ 100 հատ, չափման միավորը՝հատ
3	Թղթապանակ արագակար թղթյա	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթի համար, չափման միավորը՝հատ
4	Թղթապանակ կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, չափման միավորը՝ հատ
5	Թուղթ նշումների համար, կպչուն	Թուղթ գրելու, (76.2x127) մմ դեղին ձևաչափերով, ինքնասոսնձվող, թղթի սոսնձվածքը 1,25-ից ոչ պակաս, սպիտակությունը 75 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ ցանկացած տեսքով, թղթի նյութն ըստ ԳՕՍՏ 18510-87 կամ համարժեք, կպչուն չափման միավորը՝տուփ/100թերթ
6	Թուղթ նշումների համար, տրցակներով	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի, տրցակներով կամ համարժեքը, չափման միավորը՝ տուփ/100թերթ
7	Սեղմակ (կլիպս) փոքր	Մետաղական, լայնությունը 19 մմ, չափման միավորը՝ հատ
8	Սեղմակ (կլիպս) միջին	Մետաղական, լայնությունը 25 մմ, չափման միավորը՝ հատ
9	Սեղմակ (կլիպս) մեծ	Մետաղական, լայնությունը 32 մմ, չափման միավորը՝ հատ
10	Ամրակ մետաղյա փոքր	Փոքր , գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ, չափման միավորը՝ տուփ/100 հատ
11	Գրիչ գնդիկավոր	Գրիչ գնդիկավոր տարբեր գույների, չափման միավորը՝ հատ
12	Գծանշիչ (մարկեր) սովորական	Տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով, չափման միավորը՝ հատ
13	Մատիտ,գրաֆիտե միջուկ սովորական	Գրաֆիտե միջուկ մեխանիկական մատիտի համար, անվանական տրամագծերը՝ 0,5 մմ և 2,0 մմ, կարծրությունը HB, ԳՕՍՏ Ռ 50249-92 կամ համարժեքը, չափման միավորը՝ հատ
14	Սրիչ սովորական	Սրիչ գրաֆիտե մատիտի համար, չափման միավորը՝ հատ

N	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
15	Ռետին (լաստիկ) հասարակ	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար, չափման միավորը՝ հատ
16	Ուղղիչ գրիչներ	Ուղղիչ գրիչ 7 մլ կամ համարժեքը՝ նախատեսված ուղղումներ կատարելու համար, չափման միավորը՝ հատ
17	Ուղղիչ երիզներ կամ ժապավեններ	Ուղղիչ ժապավեն 4,2մմ x 5մ կամ համարժեքը՝ նախատեսված ուղղումներ կատարելու համար, չափման միավորը՝ հատ
18	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սկոչ)	Գրասենյակային օգտագործման համար գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ, ԳՕՍ 20477-86, չափման միավորը՝ հատ
19	Սոսինձ	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, չափման միավորը՝ հատ
20	Կարիչ (ստեպլեր)	Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, չափման միավորը՝ հատ
21	Ապակարիչ	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար, նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար, չափման միավորը՝ հատ
22	Դակիչ (ծակոտիչ)	Ծակոտիչ գրասենյակային, մինչև 36 թերթ դակելու համար, չափման միավորը՝ հատ
23	Հաշվասարք (կալկուլյատոր)	12 նիշանի սեղանի (21X294)սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող, չափման միավորը՝ հատ

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

Հայաստանի հանրային
հեռուստառադիոընկերություն ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն

Հ/Հ 900011430163

հվհհ 01539597

Էլ. փոստ syune@cptvrc.am

Աշխատակազմի ղեկավար՝ Դ. Գասպարյան

_____

Հավելված № 2
_____ 2014 թ. կնքված
«ՀՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով պայմանագրի ***նախագծի***

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հիմնարկի անվանումը՝ **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
08	03	01	01	105033

Ծրագրի անվանումը՝ **Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում**

դրամ

N	Գնման ենթակա արանքներ (աշխատանքներ, ծառայություններ)												
	Անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ)	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ		Ընդամենը	
				Քանակ	գումար	Քանակ	գումար	Քանակ	գումար	Քանակ	գումար	Քանակը	Գինը
1	Թուղթ գրելու, տպագրելու համար	կգ		40		40		60		90		230.00	
2	Թղթապանակ(ֆայլ)	հատ						200		200		400.00	
3	Թղթապանակ արագակար թղթյա	հատ						30				30.00	
4	Թղթապանակ կոշտ կազմով	հատ		20						200		40.00	
5	Թուղթ նշումների համար, կպչուն	հատ		10				10				20.00	
6	Թուղթ նշումների համար, տրցակներով	տուփ/ 100		3				3				6.00	
7	Սեղմակ (կլիպս) փոքր	հատ		40								40.00	
8	Սեղմակ (կլիպս) միջին	հատ				30						30.00	
9	Սեղմակ (կլիպս) մեծ	հատ				30						30.00	
10	Ամրակ մետաղյա փոքր	տուփ/ 100				10						10.00	
11	Գրիչ գնդիկավոր	հատ		30				70				100.00	
12	Գծանշիչ (մարկեր) սովորական	հատ						8				8.00	
13	Մատիտ,գրաֆիտե միջուկ սովորական	հատ		20								20.00	

N	Անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ)	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ		Ընդամենը	
				Քանակ	գումար	Քանակ	գումար	Քանակ	գումար	Քանակ	գումար	Քանակը	Գինը
14	Սրիչ սովորական	հատ		10								10.00	
15	Ռետին (լաստիկ) հասարակ	հատ		10						10		20.00	
16	Ուղղիչ գրիչներ	հատ		5						5		10.00	
17	Ուղղիչ երիզներ կամ ժապավեններ	հատ				5						5.00	
18	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սկոչ)	հատ				20						20.00	
19	Սոսինձ	հատ								6		6.00	
20	Կարիչ (ստեպլեր)	հատ				2						2.00	
21	Ապակարիչ	հատ				2						2.00	
22	Դակիչ (ծակոտիչ)	հատ				2						2.00	
23	Հաշվասարք (կալկուլյատոր)	հատ				5						5.00	
	Ընդամենը												

ԳՆՈՐԴ

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն
ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011430163
հվհհ 01539597
Էլ. փոստ syune@cptvrc.am

Աշխատակազմի ղեկավար՝ Դ. Գասպարյան

_____

ՎԱՃԱՌՈՂ

Հավելված № 3
_____ 2014 թ. կնքված
«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով պայմանագրի ***նախագծի***

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հիմնարկի անվանումը՝ **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն**

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
08	03	01	01	105033

Ծրագրի անվանումը՝ **Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում**

հազ. դրամ

N	Անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին												Ընդամենը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	Թուղթ գրելու, տպագրելու համար			17%	17%	17%	35%	35%	35%	60%	60%	60%	100%	100%
2	Թղթապանակ(ֆայլ)									50%	50%	50%	100%	100%
3	Թղթապանակ արագակար թղթյա									100%	100%	100%	100%	100%
4	Թղթապանակ կոշտ կազմով			50%	50%	50%	50%	50%	50%	50%	50%	50%	100%	100%
5	Թուղթ նշումների համար, կպչուն						50%	50%	50%	100%	100%	100%	100%	100%
6	Թուղթ նշումների համար, տրցակներով			50%	50%	50%	50%	50%	50%	100%	100%	100%	100%	100%
7	Սեղմակ (կլիպս) փոքր			100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
8	Սեղմակ (կլիպս) միջին						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
9	Սեղմակ (կլիպս) մեծ						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
10	Ամրակ մետաղյա փոքր						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
11	Գրիչ գնդիկավոր			30%	30%	30%	30%	30%	30%	100%	100%	100%	100%	100%
12	Գծանշիչ (մարկեր) սովորական									100%	100%	100%	100%	100%
13	Մատիտ,գրաֆիտե միջուկ սովորական			100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

N	Անվանումը	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
14	Սրիչ սովորական			100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
15	Ռետին (լաստիկ) հասարակ			50%	50%	50%	50%	50%	50%	50%	50%	50%	100%	100%
16	Ուղղիչ գրիչներ			50%	50%	50%	50%	50%	50%	50%	50%	50%	100%	100%
17	Ուղղիչ երիզներ կամ ժապավեններ						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
18	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սկոչ)						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
19	Սոսինձ												100%	100%
20	Կարիչ (ստեպլեր)						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
21	Ապակարիչ						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
22	Դակիչ (ծակոտիչ)						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
23	Հաշվասարք (կալկուլյատոր)						100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
	ԸՆԴԱՄԵՆ													

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011430163

հվհհ 01539597

Էլ. փոստ syune@cptvrc.am

Աշխատակազմի ղեկավար՝ Դ. Գասպարյան

_____

ՎԱՃԱՌՈՂ

Հավելված № 4
_____ 2014 թ. կնքված
«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով պայմանագրի ***նախագծի***

Գնորդ	**Վաճառող**
Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ	
Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 Հ/Հ 900011430163 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
ՀՎՀՀ 01539597	

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«-----» ---------- 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)
Պայմանագրի համարը՝
(Համաձայնագրի համարը)

Գնորդն, ի դեմս Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ի աշխատակազմի ղեկավար Դ. Գասպարյանի, Վաճառողն՝ ի դեմս -------- տնօրեն ----------, հիմք ընդունելով այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքը (այուհետ՝ ապրանք) համապատասխանում է պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումը

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամնեը				

Վերոհիշյալ ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքները հանձնեց	Ապրանքները ընդունեց
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.